

Գողթէն փախաւ, ինքն ալ քիչ ետքը վերջնա-
 կանապէս հրաժարեցաւ Պատրիարքութենէ (էջ
 233): 1773 շուկա. 22ին Արարիկի օրն, Ս. Խաչի
 Գիւտի տօնին, Գասպար Ամիրայն զԳրիգոր կը
 կանչէ Առաքել Ամիրային տունը, ուր ամիրայք
 եւ խորհրդականք ժողովուած էին, եւ կ'ըսէ
 Գրիգորին. «Գուն հրաժարիլ կ'ուզես, մենք
 չենք ընդունիր:», Սակայն Գրիգոր կը պնդէ իր
 հրաժարականին վրայ, եւ 1773 Նոյ. 28ին նոր
 ժողովի կը հրաւիրէ մեծամեծները. սակայն
 Գասպար ամիրան ժողովոյն նախընթաց օրը
 Գրիգորին կը հրամայէ հակառակ անոր ընդ-
 դիմութեան՝ որ ժողովին մէջ չերեւայ, այլ
 Իւսկիւտար փակուի, եւ ինքն Ամիրայն ժողովին
 մէջ հրաժարման խօսքը կը բանայ եւ ընդունիլ
 կու տայ: Գրան տրուելի յայտարարութեան
 մէջ Գրիգոր հրաման կ'ուզէր, որ կարենայ ու-
 ղած տեղը բնակիլ, ինչպէս իր նախորդն Յակոբ:
 Սակայն ամիրայն ջնջել կու տայ այս կտորը:
 Հրաժարելէն ետեւ Գրիգոր իբր տասն
 ամիս Իւսկիւտար փակուած մնաց. վասն զի Գաս-
 պար Ամիրայն թոյլ չէր տար որ դուրս ելլէ. եւ
 երբ Ամիրայն Վարդավառի տօնին վանք կու
 գայ, Գրիգոր մինչեւ անգամ Ամիրային ոտքն
 ինկած՝ կը խնդրէ որ թողու երուսաղէմ՝ եր-
 թալ. Ամիրան կ'ընդգրկմանայ. Գրիգոր կը խնդրէ
 Թէքիրտաղեառաջնորդութիւնը, կը մերժեն: Իրեն
 կ'առաջարկեն որ Էջմիածին երթայ՝ յուսացը-
 նելով որ Վաթողիկոս կ'ըլլայ. կամ Աժգարխան
 երթայ առաջնորդ ըլլայ: Գրիգոր վերջապէս